

Եթե շնորհիւն Զրիստոսի մեք զմեր կողմն շարժեալ¹ փախուցանեմք՝ ապա այլ կողմանքն մեր եւ ձեր առաջի ոչ կարեն կալ»:

13 Եւ Պապայ տարեալ զպատգամն սպարապետին Զայոց Վահանայ Մամիկոնէի առ իւրաքանչիւր աւագս կողմանցն, թեպէտ եւ կամէին ըստ հրամանի զաւրավարին առնել, այլ ստիպով հասեալ գունդն Պարսից իւրաքանչիւր թեւ կողմանցն՝ ոչ տային պարապել, այլ դորդեալ² զկողմն աջոյ, ուր Բաշդն Վահեւունի էր՝ փախուցանէին: 14 Եւ տէր Սահակ³ ասպետ յարձակեալ նիզակաւ ի վերայ փուշտիպանաց սաղարի՝ վրիպեցին ի միմեանց⁴ զնիզակսն երկոքեան, եւ մաւտեալ առ միմեանս երիվարացն՝ բուռն հարեալ զմիմեանց հերաց եւ կռուէին: 15 Եւ տեսեալ զաւրավարին Զայոց Վահանայ Մամիկոնէնի, թէ աղմկեցան զաւրքն Զայոց եւ տկարացան առաջի թշնամեաց, ձայն արարեալ առ Վրէն Վանանդացի՝ «Յառաջեա՛, ասէ, ի վերայ թշնամեացն եւ ձեռն ի գործ արա պատերազմել»:

16 Եւ նորա զարհուրեալ՝ ասաց, եթէ «Ոչ եմ կարող. յիս ինչ ապաստան յայսմ ժամու դու մի՛ լինիր»:

17 Եւ զաւրավարին Զայոց Վահանայ Մամիկոնէի զաւրացեալ սրտիւ, եւ նշանաւ խաչին կնքեալ զինքն՝ հանդերձ Կամսարականաւքն երկոքումբք յարձակէին ի վերայ հասելոց սոցա թշնամեացն. եւ ոչ ինչ բնաւ տուեալ⁵ կալ առաջի, այլ շարժեալ սաստկապէս⁶ զկողմն իւրեանց՝ ի փախուստ դարձուցանէին. եւ առեալ զթեւն զայն՝ արկանէին զմիւս եւս թելովն զմիջոցի կողմանն. եւ արկեալ առաջի զկողմանցն երկոցունց զգունդսն՝ անթիւ բազմութիւն արանց քաջաց ի փոքր լանջակողմանն դիաթաւալ յերկիր կործանէին եւ սաստիկ արեանց հանէին ճապաղիս⁷:

18 Բայց միայն Վինն հոռեան երկուք եւս այլ⁸ զաւրաւոր նիզակակցաւք զաւրու⁹ դարձեալ ընդդէմ խիզախեր. ուր անդէն¹⁰ առ նմին քաջ զաւրավարն Զայոց Վահան Մամիկոնեան սատակեր հզարեղապէս. եւ զԱտրվշնասպն Տապեան տերն Շիրակայ Ներսէին Կամսարական, եւ այլքն ամենեքեան իւրաքանչիւր զբազում արս քաջս ընկեցեալ¹¹ յերկիր կործանէին:

19 Եւ հայեցեալ յայն՝ գունդն Բարշդի եւ այլ փախստեցն Զայոց, եւ տեսեալ, թէ բեկաւ ոյժ զաւրու գնդին Պարսից,

1 Ձ. շարժել

2 Ձ. դորդեալ

3 ՁԱտ. զտէր սահակ

4 Ձ. միմեանց (չիք ի)

5 ՏՏ. տեւեալ. Ձ. տըւեալ, ը-ի վերելից գրուած՝ Ե

6 Ձ. սաստիկապէս

7 Ձ. ճաղպախիս

8 Ատ. երկուս այլ. ԲԳտ. երկուս այլ

9 Ձ. զօրաւ

10 ԲԳտ. ծնթ. մէջ ուղղագրում են զոր անդէն

11 Ձ. ընկեցեալս